

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՑԱԿԱՆ «ՄՆԱԹՈՐԻ» ՀԱՆԳԵՍՈՒՄ

«Մնաթորի» գրական-գեղարվեստական հանգեսը Վրաստանի սովետական գրողների օրգանն է։ Այն լույս է տեսնում 1924 թվականից։ Այստեղ են տպագրել իրենց լավագույն գործերը Գ. Տաբիձեն, Ի. Գրիշաշվիլին, Կ. Գամսախուրգիան, Տ. Տաբիձեն, Լ. Քիաշելին, Մ. Ջավախիշվիլին, Ի. Աբաշիձեն, Գ. Լեոնիձեն, Ա. Միրցխուլաիան և շատ ուրիշներ։

Հրատարակության քառասուն տարիների ընթացքում «Մնաթորին» մեծ տեղ է հատկացրել թարգմանական գրականությանն առհասարակ և հայերենից կատարվող թարգմանություններին՝ մասնավորապես, որը հայ-վրացական գրական-մշակութային կապերի զարգացման գործում առանձին ներգրում է և արժանի մասնագիտական գնահատության։ Մեր նպատակը, սակայն, մատենագիտական համառոտ տեղեկանք ներկայացնելն է, որով կհեշտացվեր պլուրալիզմն այդ ուղղությամբ։

«Մնաթորի» 1925 թ. 2-րդ համարում տպագրված է հայ գրող Կարա-Դարվիշի «Հայաստանի պոեզիան վերջին շորս տարում» հոգվածը, որը, մեր կարծիքով, հետաքրքիր է ինչպես ինքնատիպ հարցադրումներով ու մեկնությամբ, այնպես էլ նրանով, որ գրված է ամսագրի խմբագրության հատուկ պատվերով և լույս է տեսել միայն վրացերեն (նրա ինքնագիրը թերևս գրողի արխիվում է դեռ)։

Կարա-Դարվիշն այստեղ արժարժում է այն ժամանակվա տեսակետից խիստ հրատապ հարցեր, գնահատում հայ պոեզիան վերջին շորս տարում, արժեքավորում որոշ գրողների գործեր, կանխատեսում նրանց զարգացման հեռանկարները, ասպազան։ Այդ իսկ հանգամանքը նկատի ունենալով՝ մենք ստորև վերաշարադրում ենք նրա որոշ մտքերն ու դրույթները, որոնք այսօր էլ շեն կորցրել իրենց ճանաչողական նշանակությունը։ Հոգվածագիրը սովետահայ պոեզիան դիտում է իր պատմական-ավանդական զարգացման մեջ, նշում, որ վերջինս ապրում է նոր վերելք և այդ կապակցությամբ նկատում, թե այն մինչև այդ եղել է տխուր, արցունքով շաղախված պոեզիա։ Հեղինակի կարծիքով արցունքները հայ դասական պոեզիայի գլխավոր մոտիվն են եղել։ Այս դրույթի վերապահելի լինելը կասկածից դուրս է, բայց հետաքրքիր է իբրև հեղինակի յուրօրինակ մոտեցումը, մանավանդ որ Կարա-Դարվիշը այդ տարիներին գրական որոնումների մեջ էր, ոչ աննկատելի տատանումներով։

Երիտասարդ բանաստեղծներից հոգվածագիրը առանձին սիրով հիշում է Լիլիշ Զարենցին, Ալյատ Վշտունուն, Գևորգ Աբովին, Գուրգեն Մահարուն, Վաղարշակ Նորենցին, Նաիրի Զարյանին և ուրիշներին։ Վերը նշված բանաստեղծներից հոգվածագիրը առանձնացնում է երիտասարդ Զարենցին։

«Զարենցը,— նշում է նա,— թագավորում է երիտասարդ բանաստեղծների շրջանում, մյուսները ձայնակցում, լրացնում են նրան։ Զարենցի ստեղծագործության մոտիվը հեղափոխությունն է։ Նա այն բանաստեղծներից է, որոնք

հրծվում են սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար Հայաստանում: Խորհրդային Հայաստան — ահա նրա նախասիրած թեման: Չարենցը դեռևս շատ երիտասարդ է, ընդամենը 27 տարեկան, նրա տաղանդը դեռևս լրիվ չի փայլել, նրանից մեծ սպասելիքներ ունենք...¹:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը շտապովեց իր կանխատեսության մեջ, որովհետև Եղիշե Չարենցը դարձավ ոչ միայն հայ ընթերցողի, այլև եղբայրական շատ ժողովուրդների սիրված բանաստեղծներից մեկը:

Հոգվածագիրն, այնուհետև, խոսում է Ազատ Վշտունու և Գևորգ Աբովի մասին, համարելով նրանց Չարենցի արժանի գրչակիցները:

«Մնաթորի» հենց նույն համարում, Կարա-Դարվիշի հոգվածից անմիջապես հետո, տպագրված է Եղիշե Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմից մի հատված և Ազատ Վշտունու «Մրրկահավի կանչը» բանաստեղծությունը՝ երկուսն էլ Կոլաու Նազիրաձեի թարգմանությամբ: Ընտրությունը, բնականաբար, պատահական չէ. և Չարենցը, և Վշտունին, և նրանց գրչակից Աբովը հանդես էին գալիս արվեստի մեջ ապագասակարգայնության, ապոլիտիկ «չեղոքության» և էսթետիզմի դեմ: Նրանց առաջ քաշած պահանջները համընկնում էին վրացական պոեզիայում տիրապետող տենդենցներին:

«Մնաթորին» հաճախ է անդրադառնում հայ դրականությունից կատարված թարգմանություններին: Այստեղ կարելի է տեսնել տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ արձակ, շափածո, դրամատիկական երկեր, քննադատական հոգվածներ, հուշեր և այլն: Սակայն ամենից շատ տեղ հատկացված է շափածո գործերին:

Խախտելով ժամանակագրական կսուրգը, նշենք, որ ամսագիրը դանաղան համարներում, դանաղան առիթներով, տպագրել է ինչպես հայ ավագագույն գրողների, այնպես էլ երիտասարդների երկերը:

Ամսագիրը պատշաճ տեղ է հատկացրել մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանի երկերին: Եվ դա պատահական չէ. երկար տարիներ ապրելով և ստեղծագործելով Ռբիլիսիում՝ նա հավասարապես թանկ էր թե հային և թե վրացուն: Հովհ. Թումանյանը մեծ դեր է կատարել անդրկովկասյան ժողովուրդների մերձեցման և կուլտուրական կապերի ամրապնդման գործում: Նա հավասարապես սիրում էր հային և վրացուն:

Հովհ. Թումանյանի հիշատակին նվիրված հոգվածներից մեկում² հոգվածագիրը մեծ սիրով ու երախտագիտության ղգացումով է խոսում մեր մեծ բանաստեղծի մասին՝ բերելով մի շարք փաստեր նրա կյանքից, որոնք վկայում են նրա փայլուն բանաստեղծ, աղնիվ քաղաքացի և մեծ հայրենասեր լինելը: Հոգվածում մասնավորապես խոսվում է այն մասին, որ, երբ վրաց ժողովուրդը մայրենի հողին էր հանձնում օտարությունից բերված մեծանուն բանաստեղծ նիկոլոզ Բարաթաշվիլու աճյունը³, տակավին երիտասարդ Հովհ. Թումանյանը

¹ Կարա-Դարվիշ, Հայաստանի պոեզիան վերջին շորս տարում, «Մնաթորի», 1925, № 2, էջ 141—144: Այստեղ և հետագա ծանոթագրություններում աշխատությունները վկայակոչում ենք թարգմանաբար:

² Վ. Իմ և դա Ա. և, Վրացի և հայ ժողովուրդների բարեկամության երդիչը, «Մնաթորի», 1953, № 4, էջ 57—64:

³ Ն. Բարաթաշվիլին մահացել է 1845 թ. Դանձակ քաղաքում: 1893 թ. նրա աճյունը տեղափոխում են Ռբիլիսի և թաղում վրաց գրողների պանթեոնում, իսկ 1938 թ. այն տեղափոխում են Մթածմինդայի հանդստարան:

կանգնած էր վրաց անվանի բանաստեղծներ Իլյա Ժավճավաձեի և Ակակի Մերեթիու կողքին: Այդ առիթով նա գրել է իր «Բարաթաշվիլու դամբանի վերա» նշանավոր բանաստեղծությունը:

Երբ մենշևիկների և դաշնականների ազդագավ քաղաքականության հետևանքով երկու դրկից ժողովուրդները միմյանց վրա ղենք բարձրացրին՝ Հովհ. Թումանյանը այդ փորձության օրերին շկորցրեց հավատը եղբայրության ու բարեկամության նկատմամբ: Նրա համոզմամբ, «Թշնամությունը, որ ստեղծված է մեր ժողովուրդների մեջ՝ արհեստական է, իսկ սերն ու եղբայրության զգացմունքը բնական և շատ ավելի ուժեղ, քան թե կարծում են մեզանում»⁴:

Այնուհետև հոգևածապիրը բերում է մի իրողություն ևս Հովհ. Թումանյանի կյանքից: Հոկտեմբերի հաղթանակից հետո վրացի առաջավոր մտավորականները սկսում են մի շարժում, որի նպատակն էր Վրաստանում բարձրագույն ուսումնական հաստատություն հիմնել, Թբիլիսիում ստեղծվում և սկսվում է գործել «Վրացական համալսարանի կադմակերպությունը»: Առաջիններից մեկը, որ ձեռք է մեկնում նորաստեղծ կադմակերպությանը և նյութական օգնություն ցույց տալիս՝ հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանն է լինում:

Վրաց ժողովուրդը երբեք չի մոռանում այն ամենը, ինչ Հովհ. Թումանյանն արել է երկու բարեկամ ժողովուրդների կուլտուրական մերձեցման համար:

1945 թ. հոկտեմբերին վրաց ժողովուրդը տոնում էր իր մեծ բանաստեղծ, նոր վրացական պոեզիայի հիմնադիր Նիկոլոզ Բարաթաշվիլու մահվան 100-ամյակը: «Մնաթորի» այդ տարվա տասներորդ համարը, աննշան բացառությամբ, նվիրված է այդ նշանավոր տարեդարձին: Առաջնորդողից անմիջապես հետո տպագրված է Հովհ. Թումանյանի «Բարաթաշվիլու դամբանի վերա» բանաստեղծությունը՝ Դավիթ Գալսեղիաձեի թարգմանությամբ, որ ինքնին հայ բանաստեղծի հանդեպ ցուցաբերվող հարգանքի ու զնահատության վկայություն է:

Հովհ. Թումանյանի գործերից ամսագիրը տպագրել է հանրահայտ «Ախթամարը»՝ Վալերիան Գափրինդաշվիլու թարգմանությամբ, «Մարոն»՝ Վ. Գորպաձեի թարգմանությամբ:

1935 թ. Վրաստանի պետական հրատարակչությունը («Սախելգամի») լույս է ընծայում Հովհ. Թումանյանի «Թմկալերդի առումը» պոեմը՝ պրոֆեսոր Լևոն Մելիքսեթ-Քեկի թարգմանությամբ ու առաջարանով: Այդ կապակցությամբ «Մնաթորին» 1939 թ. 2-րդ համարում տպագրում է մի քննադատական հոդված՝ «Մկիթիլի» (ընթերցող) ծածկանուն ստորագրությամբ: Հոդվածագիրը նշում է պոեմի արժանիքները և այն մեծ հետաքրքրությունը, որ առաջ է բերել նրա թարգմանությունը, սակայն, միաժամանակ, բացահայտվում են նաև մի շարք թերություններ, որոնցից հիմնականն այն է, որ թարգմանությունն իր բանաստեղծական արվեստով շատ ավելի ցածր է կանգնած, քան բնագիրը: Նա գրում է. «...նման թերություններ շատ կան պոեմի վրացական թարգմանության մեջ: Մենք դարմանում ենք, թե ինչո՞ւ խմբագիրն ուշադրություն չի դարձրել դրանց: Ավելի լավ չէ՞ր լինի արդյոք, եթե պրոֆ. Լ. Մելիք-

⁴ Տե՛ս Վ. Իմեզաձե, նույն տեղում, էջ 60: Հմմ. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 427:

⁵ Հ. Թումանյանի կադմակերպական-գիտական գործունեության մասին տե՛ս Ա. Մ. Ինձիկյան, Թումանյանը և հայագիտությունը, Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1963, № 6, էջ 29—46:

սեթ-Բեկր կատարեր տողացի թարգմանությունը, իսկ պոետ Իոսեփ Գրիշաշվիլին բանաստեղծականացներ այն: Կարծում ենք, որ դա ավելի մեծ պատիվ կրերեր հանգուցյալ Թումանյանի հիշատակին և առավել օգտակար կլիներ մեր ընթերցողների համար, որոնք, իրավացիորեն, մեղանից պահանջում են եղբայրական ժողովուրդների գրականության նմուշներ՝ բարձրարվեստ թարգմանություններ⁶: Պետք է ասել, որ հողվածագիրը ձիշտ է նկատել թերությունները, այդ թվում և ոչ վրացական արտահայտությունները: Այնուամենայնիվ, մեզ թվում է, թարգմանությունը ձախողված չի կարելի համարել: Ինչ վերաբերում է հողվածագրի ցանկությանը՝ պոետը տեսնել Գրիշաշվիլու թարգմանությամբ, պետք է ասել, որ այն հիմնավորված է⁷: Վրաց ընթերցողին արդեն ծանոթ էին Հ. Թումանյանի «Անուշը», «Մի կաթիլ մեղրը»՝ Ի. Գրիշաշվիլու շղերաղանցված թարգմանությամբ: Ի. Գրիշաշվիլին իրավամբ համարվում է Թումանյանի լավագույն թարգմանիչը: Դրանում մենք մեկ անգամ ևս համոզվում ենք, երբ կարդում ենք «Մնաթոքիում» տպագրված Հ. Թումանյանի «Սայաթ-նովա» բանաստեղծությունը:

Երկրորդ հայ բանաստեղծը, որին ճանաչում և սիրում է վրաց ընթերցողը՝ Ավետիք Իսահակյանն է: Վարպետն իրոք Վրաստանում ճանաչված բանաստեղծ է, նրա երկերն ու պոեմները, ի թիվս այլ լեզուների, լույս են տեսել նաև վրացերեն՝ ինչպես առանձին գրքերով, այնպես էլ պարբերական մամուլում: Վրաց քննադատները մեծ սիրով ու հետաքրքրությամբ են ուսումնասիրում Ավետիք Իսահակյանի երկերը: Վրացական մամուլը նրա ստեղծագործությանը վերաբերող բազմաթիվ հողվածներ ու գրախոսականներ է տպագրել: Վարպետի մասին գրել են Տիցիան Տաբիձեն, Կոնստանտին Գամսախուրդիան, Լևոն Մեխիքսեթ-Բեկը, Իոսեփ Գրիշաշվիլին, Շալվա Դադիանին, Գեորգի Լևոնիձեն, Սիմոն Չիքովանին, Ալեքսանդր Բարամիձեն, Սուրեն Ավչյանը, Գուրամ Կանկավան և ուրիշներ:

Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա-Մահարի» պոեմը վրաց ընթերցողին ծանոթ էր դեռևս 1931 թվականից, երբ այն հրատարակվեց առանձին գրքով Տ. Տաբիձեի թարգմանությամբ և, ինչպես ասում են, վրաց ընթերցողի սեղանի գիրքը դարձավ: Այդ թարգմանության կապակցությամբ Իսահակյանը թարգմանչի խնդրանքով գրում է մի փոքրիկ նախաբան և կենսագրական: Նախաբանում կարդում ենք. «...Ուրախ եմ և ի վիճակի եմ հայտարարելու, որ իմ ավագ եղբայրը՝ Նիկո Բարաթաշվիլին եղավ այս պոեմի ներշնչողը:

Նրա սքանչելի «Սերանին» մինչև ինքնամոռացություն հափշտակեց ինձ:

Աբու-Լալա-Մահարիի քարավանը Բարաթաշվիլու «Մերանիի» հետքերով է ընթանում»:

Այս նախաբանում կա մի անձշտություն, որ, հավանաբար, սպրդել է թարգմանության ժամանակ. դա այն է, որ Ա. Իսահակյանին ոգեշնչողը եղել է Ն. Բարաթաշվիլու «Մերանին»:

Ինչպես պարզվում է վարպետի և պրոֆ. Լևոն Մեխիքսեթ-Բեկի նամակագրությունից, Իսահակյանի դրածն աղավաղված է: Սակայն այդ չէ մեր քննարկելիք նյութը և տեսնենք, թե «Մնաթոքի» հանդեսում ի՞նչ է տպագրվել Ա. Իսահակյանի կողմից:

6 Մ կ ի թ խ վ լ է ի, Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» վրացերեն, «Մնաթոքի», 1939, № 2, էջ 191:

7 Պ. Մ ու ռ ա դ յ ա ն, Սայաթ-նովան ըստ վրացական աղբյուրների, Երևան, 1963, էջ 19 և 23:

հակյանի ստեղծագործություններից: Ինչ վերաբերում է «Մերանիի» և «Աբու-Հալայի» փոխհարաբերության հարցին, ապա դրան կանդրագառնանք մեկ ուրիշ առիթով՝ ավելի մանրամասն:

«Մնաթորի» ամսագրի 1962 թ. 5-րդ համարում տպագրված է «Աբու-Հալա-Մահարի» պոեմը, բայց այս անգամ Ռեալ Խվարաձեի թարգմանությամբ: Այդ թարգմանությունը նախորդի համեմատությամբ ավելի մոտ է բնագրին, բայց գեղարվեստական կատարելությամբ զիջում է նրան (Տ. Տաբիձեի թարգմանությամբ): Վերջերս պոեմը երրորդ անգամ թարգմանվել է հայագետ Իվանե Շիրակաձեի կողմից (դեռևս անտիպ է)⁹: Նույն ստեղծագործության երիցս թարգմանության փաստը իրոք ապացույց է, որ Ավ. Իսահակյանը վրաց ընթերցողի սիրելի բանաստեղծներից է:

Ամսագրում տպագրվել են նաև Ա. Իսահակյանի «Ռազմակոչ» (թարգմ. խ. Վարդուշիլու), «Կտակը» և «Ինչո՞ւ, ինչո՞ւ հիմա այսպես...» (թարգմ. Ս. Փաշալիշվիլու) բանաստեղծությունները:

Վրաց բանաստեղծ Գեորգի Կալանդաձեի թարգմանությամբ կարծես երկրորդ ծնունդն է ապրում Ավ. Իսահակյանի «Երբ մանուկ էի...» գողտրիկ բանաստեղծությունը: Բացի վերը նշվածից, ամսագրում տպագրվել են «Մեծ հաղթանակի օրը» (թարգմ. Իր. Աբաշիձեի), «Մարգարիտներ վրդիդ շուրջ» (թարգմ. Ն. Չաշավայի) և «Մեր պատմիչները և մեր գուսանները» (թարգմ. Կ. Լորթքիփանիձեի) բանաստեղծությունները: Վերջին բանաստեղծությունը, ինչպես հայտնի է, Ավ. Իսահակյանը նվիրել է հայ ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավիթ» հազարամյակին:

Ի միջի այլոց, հայ ժողովրդի այդ տոնին վրաց մտավորականները լավ պատրաստվեցին: Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի խմբագրությամբ և Պ. Ինգորովայի ընդարձակ առաջարանով էպոսը լույս տեսավ առանձին գրքով, իսկ «Մնաթորին» տպագրեց առանձին հատվածներ «Սասունցի Դավիթից»: Ամսագրի 1939 թ. 5—6 և 7-րդ համարներում տպագրված են էպոսի հետևյալ հատվածները՝ «Սասունցի Դավիթ» առաջին մասը (թարգմ. Ալիո Մաշաշվիլու), «Դավիթ ուղևորությունը Մսրա երկիր» (թարգմ. Ռաթղեն Գվետսձեի), «Դավիթ կոիվը Մսրա Մելիթի հետ» (թարգմ. Կարլո Կալաձեի), «Սանաճարի և Բաղդասարի հերոսություններն ու հարսանիքը» (թարգմ. Իրակլի Աբաշիձեի) և «Դավիթը պառնարած» (թարգմ. Իլո Մոսաշվիլու):

Հայ պրուլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը ամսագրում ներկայացված է «Բուլճակ է Շիր-կանալը» պոեմով, որը թարգմանել է պոետական գեմմիկոս Իոսեբ Գրիշաշվիլին: Թարգմանիչը կարողացել է հարազատ մնալ բնագրի ոճին և վրացերեն հնչեցնել այն: Այնուամենայնիվ, պոեմի թարգմա-

8 Պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Քեկը իր դասախոսություններից մեկի ժամանակ մեզ ցույց է տվել Ա. Իսահակյանի նամակներն այդ առթիվ (հետադայում նա գրանք հրատարակեց Վրաստանի դրոշների միության հայկական սեկցիայի օրգան «Ալմանախում»), որտեղ վարպետը դրում էր. «Ես չեմ հիշում թե ո՞ւմ, և երբ եմ հայտնել, թե Ն. Բարաթաշվիլու անմիջական ազդեցության ներքո եմ դրել Աբու-Հալան»:

Ա. Իսահակյանի խնդրանքով պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը ստուգել է հանգուցյալ բանաստեղծ Տիցիան Տաբիձեի անձնական արխիվը, բայց Իսահակյանի ձեռագրի ոչ մի հետք չի գտել: Տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ, Նյութեր ԱՊ. Իսահակյանի լիակատար հրատարակության համար, «Ալմանախ», Թբիլիսի, 1960):

9 ՀՄԺ. Բ. Արևածե, Իսահակյանը և վրաց գրականությունը, «Գրական թերթ», 1965, № 26:

նությունն առիթ է տվել բանավեճի՝ թարգմանչի և պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկի միջև: Խոսքը վերաբերում է թարգմանություն մեջ սպրդած մի սխալի՝ «Շիրակ» բառը թարգմանիչը դրել է «ք»-ով, և ահա, տառացի քննության ղեկավար, պոետի գործողությունը Հայաստանից տեղափոխվում է Վրաստան, Շիրակից՝ Շիրաքի, Ալավանի գետահովիտը՝ Կախեթում:

Ամսագրում տպագրվել է մի նմուշ միջնադարյան հայ պոետիայից՝ Նաղաշ Հովնաթանի «Տաղքի վերայ Գուրջստանայ գողալներին...» բանաստեղծությունը՝ նույն Իոսեփ Գրիշաշվիլու թարգմանությամբ: Այդ նույն համարում Նաղաշ Հովնաթանի ստեղծագործության մեկնարանությամբ հանդես է եկել պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը:

Հաճելի անակնկալ էր մեզ համար այն, որ տաղանդավոր քանդակագործ, Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ Երվանդ Քոչարը նաև շնորհալի բանաստեղծ է: «Մնաթորի» ամսագրի 1958 թվականի 10-րդ համարում, որն ամբողջությամբ նվիրված է Թբիլիսիի 1500-ամյակին, տպագրված է նրա բանաստեղծությունը՝ նվիրված իր մանկության ու պատանեկության քաղաք Թբիլիսիին:

Հնարավոր չէ թվել բոլոր հեղինակների գործերը, որոնք լույս են տեսել ամսագրում: Բայց չի կարելի չնշել, որ ամսագիրն իր էջերը սիրով տրամադրել է նաև հայ բանաստեղծներ Գեղամ Սարյանին, Սողոմոն Տարոնցուն, Հովհաննես Շիրազին, Սիլվա Կապուտիկյանին և ուրիշներին:

Ամսագրում տպագրված արձակ գործերը համեմատաբար քիչ են: Դա բացատրվում է նրանով, որ վերջիններս անհամեմատ ծավալուն են, որով դժվարանում է նրանց հրատարակումը, իսկ հատվածներ տպագրելով չի կարելի քիչ թե շատ ամփոփ պատկերացում տալ հեղինակի մասին: Այնուամենայնիվ, ամսագիրը որոշ ընդմիջումներով տպագրել է նմուշներ հայ արձակագիրների ըստ ստեղծագործություններից:

Սովետահայ արձակի նշանավոր ներկայացուցիչներին՝ Դերենիկ Դեմիրճյանին և Ստեփան Զորյանին մենք հանդիպում ենք ամսագրի 30-ական թվականների սկզբների համարներում և ավելի ուշ: Այդ ժամանակաշրջանում տպագրվել է Դ. Դեմիրճյանի «Երեքը» պատմվածքը՝ Ղ. Կարապետյանի թարգմանությամբ: Թարգմանությունը հաջողված է և կարգացվում է մեծ հետաքրքրությամբ: Տարիներ հետո տպագրվում է նույն հեղինակի «Տուն» պատմվածքը՝ ղոբախտարար անհաջող թարգմանությամբ (թարգմ. է. Զեղզենիձեի և Ս. Սանվելյանի): Ի դեպ, վրաց ընթերցողը ծանոթ է Դ. Դեմիրճյանի «Վարդանանքին» (տակավին ոչ կատարյալ թարգմանությամբ), բայց, հավոք, դեռևս ամբողջական պատկերացում չունի Դեմիրճյան-նովելիստի մասին:

Նրեսնական թվականներին «Մնաթորում» տպագրվել է Ստ. Զորյանի «Սպիտակ քաղաք» վեպից մի հատված՝ Ղ. Կարապետյանի թարգմանությամբ: Ավելի ուշ, արդեն մեր սրերում, տպագրվում է Ստ. Զորյանի «Խնձորի այգին» նշանավոր պատմվածքը, որն ավելի լրիվ ու ամբողջական պատկերացում է տալիս տաղանդավոր փայտասանի արվեստի ուժի, գրելաձևի ու վարպետության մասին: Այս գործը թարգմանել է գրող-ակադեմիկոս Կոնստանտին Գամսախուրդիան, և վրացերենում հնչում է ընդգրկված չլիթոգրված պատկանություններ: Թարգմանիչն իր տաղանդով ջերմացրել է գրվածքը, շնչավորել, հասցրել ընդգրկված: Նրա թարգմանիչն իր տաղանդով չի վիջում թարգմանվող հեղինակին, թարգմանությունն ապրում է երկրորդ ստեղծագործական լիարյուն կյանքով:

«Մենաթերի» ամսագրում մենք հանդիպում ենք Մովսես Արագու ստեղծագործությանը՝ հունձինս «Ինչմանի երգը» պատմվածքի, որը շոշափում է արթնացող Արևելքի թեման, արևելյան ժողովուրդների կյանքը պատկերող մի պատմվածք, ինչպես արդեն նկատվում է գրականագիտության մեջ, Այստեղ Լ. Արապին առաջինն էր, որ դիմեց այդ թեմայի գեղարվեստական մշակմանը, արով և գրավեց ընթերցողի ուշադրությունը:

«Մենաթերի» 1930 թ. առաջին համարում տպագրվում են հատվածներ Ալեքսանդր Շիրվանդադեի ստեղծագործություններից («Կյանքի բովից»):

Երևանական թվականներին հիմնականում ավարտվում է հին գյուղի սոցիալիստական վերակառուցումը, որն իր գեղարվեստական արտացոլումն է գտել մեր գյուղագիրներից շատերի ստեղծագործություններում: Այդ տարիներին «Մենաթերին» տպագրեց հայ գյուղագիրների մի շարք պատմվածքներ:

Ապրելով և ստեղծագործելով Թբիլիսիում, Մաթևոս Դարբինյանը ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս տեղական գրական կյանքին: Նրա երկերը թարգմանվել են ռուսերեն և վրացերեն: Վրաց ընթերցողը ճանաչում էր նրան, և պատահական չէ, որ «Մենաթերին» իր էջերում տեղ է տվել Մ. Դարբինյանի «Թշնամիները» պատմվածքին:

1935 թ. ամսագիրը տպագրում է հայ նշանավոր արձակագիր-նովելիստ Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» հայտնի պատմվածքը (թարգմ. Գր. Սիմոնդովյանի), որը բացառիկ հետաքրքրությամբ ու սիրով ընդունեց վրացի ընթերցողը: Վերջինիս համար Ա. Բակունցը ներկայանում էր ոչ միայն իրրև նոր բնաշխարհ ու հարաբերություններ, այլև գեղագիտական ինքնատիպ ըմբռնումներ, արվեստի փիլիսոփայություն ու պատկերացումներ ունեցող հեղինակ, որին հույում է հասարակական կյանքի և գրականության փոխհարաբերության հարցը:

Սիմոն Նաբախտյանի «Զադել» հետաքրքիր պատմվածքով հանդեսում ներկայացված է նաև արկածային գրականությունը Ս. Նաբախտյանն այդ տարիներին մեծ ճանաչում ուներ որպես նշանավոր քրեագետ: Հիշյալ ժանրի պատմվածքները հետաքրքրել են թարգմանչին (Ղ. Կարապետյան) և ամսագրին:

«Մենաթերի» էջերում տեղ են գտել նաև Մադաթ Պետրոսյանի «Բուշեիկ եմ» և Միքայել Մանվելյանի «Մի գլխարկի պատմություն» պատմվածքները:

20-ական թվականներին բանվոր գրող Մարտինը (Մարտին Ղարազյոզյան) պրեզ իր «Նավթ ծախող Սիմոնը» պատմվածքը՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման ու էլեկտրաֆիկացիայի հարցերի արծարծումով: Պատմվածքի թեման ինքնին նորություն էր և գեղարվեստական առումով հաջողված: Ժամանակին այդ պատմվածքը բարձր է գնահատել Նար-Դոսը: Ուստի պատահական չէ, որ «Մենաթերի» խմբագրական կոլեգիան նպատակահամար է գտել վրաց ընթերցողին ներկայացնել այն՝ Ղազարոս Կարապետյանի թարգմանությամբ:

1936 թ. առաջին համարում տպագրված է «Էլիզա» պատմվածքը, որի հեղինակն է Լերիտասարգ գրող, ժուռնալիստ՝ վաղամեռիկ Արտեմ Դավթյանը:

Ուշագրավ է, որ պատմվածքը գրված է վրացերեն: Հետագայում, 40-ական թվականներին լիովին նվիրվելով թարգմանչական գործունեության, Արտ. Դավթյանն իր բեղմնավոր ու շնորհակալ աշխատանքով մեծ գործ կատարեց հայ գրականությունը վրաց ընթերցողին ծանոթացնելու գործում:

Վերջինիս թարգմանությամբ «Մնաթորիում» տպագրվել են հայ գրողներից շատերի երկերը: Արտ. Դավթյանն է թարգմանել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, որն ամբողջությամբ լույս տեսավ առանձին գրքով, իսկ հատվածները տպագրվեցին «Մնաթորիում»: Ալեքսանդր Շիրվան-դադեի «Արտիստը», Նար-Դոսի «Սև փողերի տոկոսները», ինչպես նաև սովետահայ գրողներ Բենիկ Սեյրանյանի «Վերադարձված մանկությունը», Վարդան Ատրյանի «Հովիվ Թեոգորեն» և Նաիրի Զարյանի «Մեսրոպ Կարսեցյան» («Փորձադաշտ») գրաման:

Այսօր էլ Դավթյանների ընտանիքը՝ Հովհաննես և Արշիլ Դավթյանները (հանգուցյալ Արտեմ Դավթյանի հայրն ու եղբայրը) մեծ ու շնորհակալ աշխատանք են կատարում՝ թարգմանելով ինչպես հայերենից վրացերեն, այնպես էլ վրացերենից հայերեն: Նրանց ջանքերով վրաց ընթերցողն առաջին անգամ ծանոթացավ մեր նշանավոր վիպասան Մուրացանի հետ, որի «Նոյի ագռավը» Արշիլ Դավթյանի թարգմանությամբ լույս տեսավ առանձին գրքով, իսկ բոլորովին վերջերս վրաց ընթերցողի սեղանին դրվեց Դաֆֆու «Ոսկի աքաղաղը»:

Քանի որ խոսք եղավ թարգմանիչների մասին, չի կարելի չհիշատակել նաև Ղազարոս Կարապետյանին, որը 20—30-ական թվականներին նույն դերն է կատարել, ինչ Դավթյանները՝ մեր օրերին:

Ամսագրում մեծ տեղ են գրավում քննադատական հոդվածները հայ գրականության և հայ գրողների մասին, հուշեր և այլ նյութեր, այդ թվում՝ դոցենտ Իվանե Բեգլարովի հոդվածը («Հայ ժողովրդի մեծ գրամատուրգը») նվիրված Գաբրիել Սունդուկյանի մահվան 25-ամյակին: Նույն տարեթվին է վերաբերում նաև Իլյա Զուրաբիշվիլու (էլեֆթերաձե) «Գաբրիել Սունդուկյանցը որպես մարդ» (մի քանի էպիզոդ նրա անձնական կյանքից) հաղորդումը, որտեղ առանձին ջերմությամբ է խոսվում Գ. Սունդուկյանի մասին: Նպատակահարմար ենք գտնում այդ հոդվածից մի քանի մեջբերում կատարել:

«Գաբրիել Սունդուկյանցը այնքան սերմ է ցանել մեր հին թատրոնի պատմության մեջ, որ այդ թատրոնի պատմությունն ուսումնասիրողներից ոչ մեկը չի կարող շրջանցել նրան:

...Արդեն 25 տարի է անցել նրա մահվանից, և նրա լավագույն հիշատակը կլինի նրա երկերի վրացերեն թարգմանությունը, մանավանդ, որ նրա կոմեդիաներից ոչ մեկը, բացառությամբ «Պեպո»-ի, չի հրատարակվել վրացերեն: «Պեպոն» էլ ով գիտե, թե երբ է հրատարակվել, և ոչ մի տեղ չի ճարվում:

Գուցե ժամանակակից խաղացանկի համար նրա կոմեդիաները ինչ որ շափով արդեն հնացել են, բայց որպես մեծ վարպետի գրամատիկական երկեր, որից մենք շատ բան ենք սովորել (թեկուզ այն, որ հին Թիֆլիսի մասին ճիշտ պատկերացում ունենք), անպայման պետք է լինեն սովետական ընթերցողի պահպանում»¹⁰:

Ի պատիվ վրաց գրական հասարակայնության պետք է ասել, որ 1950 թ. «Սաբնոթա մծերալի» («Սովետական գրող») հրատարակչությունը լույս ընծայեց Գ. Սունդուկյանի պիեսների ժողովածուն, որի մեջ մտել են գրամատուրգի լավագույն պիեսները՝ «Պեպո», «Խաթարալա», «Քանդած օջախ», «Գիշերվան սարը խեր է»: Ժողովածուն խմբագրել և առաջաբանը գրել է Ի. Գրիշաշվիլին:

¹⁰ Ի. Զուրաբիշվիլի. Գաբրիել Սունդուկյանցը որպես մարդ, «Մնաթորի», 1937 թ., № 6—7, էջ 189—195:

նույն Զորաբեռնիկու հոգվածում բերված է մի քանի դեպք Սունդուկյանի անձնական կյանքից: Այդ մասին հոգվածագրին պատմել է զրամատուրգի խոհարար Յակոբ (Հակոբ) Թութաձեն:

«...Սունդուկյանն ամեն ամառ գնում էր Բորժոմ հանգստանալու: Միշտ մերազարձի օրը նա կորչում էր: Մի անգամ էլ, երբ նա շատ է ուշանում, զրամատուրգի կինը Թութաձեին, որն արդեն 14-տարի նրանց խոհարարն էր, ուղարկում է ամուսնու ետևից: Սա գնում է և Սունդուկյանին գտնում անտառում՝ ի եղևնու մոտ կանգնած: Դրամատուրգն այնպես էր նայում այդ ծառին, կարծես առաջին անգամն էր տեսնում: Հետո մի քանի անգամ շրջանցում է, փաթաթվում ծառին և սկսում համբուրել: Թութաձեին թվում է, թե իր տերը խելագարվել է: Երբ նա հասնում է Սունդուկյանին, վերջինս զգալով որ խոհարարն ամեն ինչ տեսել էր, մեղավոր ժպիտը դեմքին ասում է. «Մնաս բարով էի անում...»: Խոհարարն զգում է, որ նրա ներսում մի անսովոր բան է կատարվում: Նույն տարին մեծ զրամատուրգը վախճանվում է»:

Հետաքրքրասեր ընթերցողը ամսագրում կարող է հանդիպել Դ. Մեբուկեի «Հակոբ Հակոբյան», Լ. Մելիքսեթ-Քեկի «Ալ. Շիրվանզադեի «Քառսը» վրացերեն», «Վահան Տերյան», Մկիթիսվելու (ծածկանվան բացումը մեզ հայտնի է) «Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» վրացերեն» և այլ հեղինակների բազմաթիվ հոգվածների ու գրախոսականների, որոնց սոսկ թվարկումն իսկ շատ հեռու կտաներ, ուստի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում մեր կողմից կազմված մատենաչրտությունը:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՑԱԿԱՆ «ՄՆԱԹՈՐԻ» ՀԱՆԴԵՍՈՒՄ

ա) Գեղարվեստական գրականություն

Արուսյան Նաչատուր, Աղասի (բանաստեղծություն), թարգմանիչ՝ Ի. Խոշտարիա, «Մնաթոր», 1935, № 10, էջ 151:

Արուսյան Նաչատուր, Վերք Հայաստանի (հատվածներ), Արա. Դավթյան, 1948, № 10, 100—106:

Ազատ Վշտունի, Մրրկահավի կանչը, Կուսու նադիրաձե, 1925, № 2, 146:

Ատրյան Վարդան, Հովիվ Թեղորեն, Արու. Դավթյան, 1949, № 11, 91—97:

Արագի Մովսես, Դուշմանի երգը, Ղ. Կարապետյան, 1927, № 7, 100—102:

Քակունց Ակսել, Ալպիական մանուշակ, Գր. Սիմոնզուլյի, 1935, № 1, 89—96:

Ռոյան Գուրգեն, Երգ եղբայրության, Բ. Զանգուլաշվիլի, 1953, № 8, 16—18:

Ռոյան Գուրգեն, Սովետական Վրաստանին, Գր. Աբաշիձե, 1953, № 8, 16:

ԿառնաՎերյան Աշոտ, Վրացական լեզենդ, Վ. Բալաձե, 1952, № 4, 100—106:

Գրաշի Աշոտ, Դեղձենու տակ, Ա. Սուլակաուրի, 1960, № 9, 22:

Դավթյան Արտեմ, Էլիզա, 1936, № 1, 80—92:

Դավթյան Վահագն, Կենաց, Վ. Բեժուկելի, 1953, № 8, 78—79:

Դավթյան Վահագն, Ողջուն, Կ. Բորոխիձե, 1953, № 8, 79—80:

Դավիթ Սասունցի, առաջին մաս, Ա. Մաշաշվիլի (Միքայիլովա), 1939, № 5, 25—37:

Դավիթ Սասունցի, Դավթի ուղևորությունը Մոսկոյ երկիր, Բ. Գվետաձե, 1939, № 5, 38—47:

Դավիթ Սասունցի, Դավիթը գաղութարած, Իլ. Մոսաշվիլի, 1939, № 7, 64—75:

Դավիթ Սասունցի, Դավթի կոնիլը Մոսկոյ Մելիքի հետ, Կ. Կալաձե, 1939, № 6, 107—116:

Դավիթ Սասունցի, Սանասարի և Բսղդասարի հերոսություններն ու հարսանիքը, Իր. Աբաշիձե, 1939, № 7, 56—63:

Դարբինյան Մաթևոս, Թշնամիներ, Ղ. Կարապետյան, 1927, № 7, 102—105:

* Ստեղծագործության խորագրից հետո տրվում է թարգմանչի ազգանունը, ուստի չենք կրկնում թարգմանիչ անունը:

- Գարյան Ջարդանդ, Բենիամին Կարսոյան, Արտ. Գալթյան, 1953, № 8, 62—74:
- Գեմիբրձյան Գեորգենիկ, Երեքը, Ղ. Կարապետյան, 1931, № 5—6, 128—160:
- Գեմիբրձյան Գեորգենիկ, Տուն, է. Ջեղղենիձե և Ս. Մանվելյան, 1953, № 8, 19—39:
- Ջարյան Նաիրի, Երգ եղբայրության, Իր. Արաշիձե, 1950, № 11, 10:
- Ջարյան Նաիրի, Կոմիտասին, Ջ. Հորթթիփանիձե, 1943, № 6, 111:
- Ջարյան Նաիրի, Հայրենի տուն, Ջ. Հորթթիփանիձե, 1948, № 6, 111:
- Ջարյան Նաիրի, Մեսրոպ Կարսեցյան (Փորձադաշտ), Արտ. Գալթյան, 1953, № 8, 85—138:
- Ջարյան Նաիրի, Մոսկվա, Շ. Ամիրսուլաշվիլի, 1948, № 6, 108—110:
- Ջորյան Ստեփան, Սպիտակ քաղաք (Հատվածներ վեպից), Ղ. Կարապետյան, 1950, № 5—6, 139—149:
- Հորյան Ստեփան, Խնձորի այգին, Կ. Գամսախուրդիա, 1961, № 10—11:
- Էմին Գեորգ, Բալլադ ձկնորսի մասին, Խ. Բերուլավա, 1953, № 8, 42—44:
- Էմին Գեորգ, Վյադիմիր Մայակովսկուն, Ռ. Մարգիանի, 1953, № 8, 42:
- Թորգոմյան Ծերուն, Կույրերի հանգստյան տանը, Հր. և Հովհ. Գալթյանիձե, 1959, № 12, 42—84:
- Րուսանյան Հովհաննես, Արթամար, Վ. Գափրինդաշվիլի, 1938, № 4, 70—72:
- Րուսանյան Հովհաննես, Բարաթաշվիլու դամբանի վերա, Գ. Գալեշիլիաձե, 1945, № 10, 9:
- Րուսանյան Հովհաննես, Մարո, Վ. Գափրինդաշվիլի, 1938, № 7, 99—103:
- Րուսանյան Հովհաննես, Նրան, Գ. Յեցիլաձե, 1948, № 4, 24:
- Րուսանյան Հովհաննես, Սայաթ-Նուվա, Ի. Գրիշաշվիլի, 1948, № 4, 24:
- Իսահակյան Ավետիք, Աբու-Հալա-Մահարի, Ռ. Թվարաձե, 1962, № 5, 70—80:
- Իսահակյան Ավետիք, Երբ մանուկ էի..., Գ. Կալանդաձե, 1953, № 8, 8:
- Իսահակյան Ավետիք, Ինչո՞ւ, ինչո՞ւ..., Ս. Փաշալիշվիլի, 1945, № 9, 68:
- Իսահակյան Ավետիք, Կտակ, Ս. Փաշալիշվիլի, 1945, № 9, 68:
- Իսահակյան Ավետիք, Մարգարիտներ վրդիդ շուրջ, Ն. Ջալավա, 1953, № 8, 8:
- Իսահակյան Ավետիք, Մեծ հաղթանակի օրը, Իր. Արաշիձե, 1953, № 8, 7—8:
- Իսահակյան Ավետիք, Մեր պատմիչները և մեր գուսանները, Կ. Հորթթիփանիձե, 1946, № 9—10, 132—133:
- Իսահակյան Ավետիք, Ռազմակոչ, Խ. Վարդուշիլի, 1944, № 1—2, 54—55:
- Կապուտիկյան Սիլվա, Ինչո՞ւ, Ն. Ջալավա, 1953, № 8, 41:
- Կապուտիկյան Սիլվա, Ժամացույց, Ռ. Մարգիանի, 1953, № 8, 40:
- Կարայան Հովհաննես, Թրիխսի, է. Քուրդիանի, 1958, № 10, 92:
- Կուրտիկյան Ստեփան, Երևան (ակնարկ), 1953, № 8, 139—143:
- Հակոբյան Հակոբ, Բոլշեիկ է Շիր-Կանալը, Ի. Գրիշաշվիլի, 1937, № 11, 71—74:
- Հովհաննիսյան Հրաչյա, Ժողովրդական ուսուցիչ, Ռ. Մարգիանի, 1953, № 8, 58—59:
- Հովհաննիսյան Հրաչյա, Սաղավարտ, Ա. Աղամիա, 1953, № 8, 60—61:
- Հովհաննիսյան Հրաչյա, Պտուտակ, Թ. Ջանգուլաշվիլի, 1953, № 8, 59—60:
- Էոն (Վրաստանում ապրող հայ բանաստեղծներ՝ Գ. Գրիգորի, Պահարեի, Ս. Ավլյանի, Հ. Կարայանի, Մ. Քարամյանի, Ռ. Աղարաբի, Արտավազդ Ջուլհակի կուլեկտիվ բանաստեղծությունների վերաբերյալ Վրաստանի 20-ամյակին), Պ. Արամիա և Գ. Գալեշիլիաձե, 1941, № 2, 68:
- Մանվելյան Միքայել, Մի զվարկի պատմություն, Ղ. Կարապետյան, 1929, № 3—9, 107—123:
- Մարտին, Նավթ ծախող Սիմոնը, Ղ. Կարապետյան, 1929, № 7, 108—117:
- Մարգարյան Մարո, Աղջիկ էի..., Մ. Մրեկիշվիլի, 1953, № 8, 55:
- Մարգարյան Մարո, Խոհեր գինվորի մասին, Մ. Մրեկիշվիլի, 1953, № 8, 54:
- Մարգարյան Մարո, Կզնամ Մոսկվա, Մ. Մրեկիշվիլի, 1953, № 8, 53:
- Մկրտիչ Կորյուն, Փարիզում Իլիշի մոտ (Հատված «Կամո» վեպից), Հր. և Հովհ. Գալթյանիձե, 1960, № 4, 9—16:
- Նարախտյան Սիմոն, Ջաղելե, Ղ. Կարապետյան, 1927, № 7, 106—110:
- Նար-Դոս, Սև փողերի տոկոսները, Արտ. Գալթյան, 1948, № 1, 94—100:
- Նաղաշ Հովնաթան, Տաղքի վերայ Գուրջստանայ դուլալներին..., Ի. Գրիշաշվիլի, 1933, № 5, 166—167:
- Շիրադ Հովհաննես, Գտա, Թ. Ջանգուլաշվիլի, 1953, № 8, 14:
- Շիրադ Հովհաննես, Ծիծաղում են մեր լեռները, Ս. Արաշիլի, 1953, № 8, 15:

- Շիրազի Հովհաննես, *Մուսուղ, Մ. Փոքրիկիկի, 1960, № 10, 179—182:*
- Շիրվանդադե Ալեքսանդր, *Արտիստ, Արտ. Գալթյան, 1950, № 6, 95—120:*
- Շիրվանդադե Ալեքսանդր, *Կանթի բովից (հատվածներ), Ղ. Կարապետյան, 1930, № 1, 83—90:*
- Շարենց Եղիշե, *Ամբոխները խելադարված (հատվածներ), Կուրու Նադիրաձե, 1925, № 2, 144—145:*
- Շարենց Եղիշե, *Գալթի որմնադիրները, Գ. Գալթիաձե, 1935, № 11—12, 40—42:*
- Պետրոսյան Մադաթ, *Սարգիսիկ Լժ, Ղ. Կարապետյան, 1930, № 5—6, 150—154:*
- Սահյան Համո, *Այս գրքի մասին..., Շ. Փոքրիկիկ, 1953, № 8, 81—82:*
- Սահյան Համո, *Գամբարանի մոտ, Ա. Աղամբա, 1953, № 8, 83—84:*
- Սարմեն, *Կառավարության տունը, Վ. Բուծուկելի, 1953, № 8, 75:*
- Սարմեն, *Իմ պատանեկությունը, Վ. Բուծուկելի, 1953, № 8, 76:*
- Սարմեն, *Հին աղբյուրը, Վ. Լափերաշվիլի, 1953, № 8, 77:*
- Սարյան Գեղամ, *Առաջնորդի մոնոմենտը, Գ. Կալանդաձե, 1953, № 8, 9—13:*
- Սարյան Գեղամ, *Պատմություն՝ դրված ժայռի վրա, Վ. Գափրինյանի, 1935, № 11—12, էջ 37:*
- Սեյրանյան Բենիկ, *Անմար կրակը, Հովհ. Գալթյան, 1957, № 5, 94—109:*
- Սեյրանյան Բենիկ, *Վերադարձած մանկություն, Արտ. Գալթյան, 1947, № 1—2, 81—86:*
- Սեյրանյան Բենիկ, *Մենություն, Հովհ. Գալթյան, 1956, № 4, 101—107:*
- Տարոնցի Սողոմոն, *Բայլաղ չիրուխի մասին, Վ. Գափրինյանի, 1935, № 11—12, 43—44:*
- Սարամյան Մարտին, *Խոսք պարտիային, Գր. Աբաշիձե, 1953, № 7, 72:*
- Քոչար Երվանդ, *Գովք եղբայրության, Ք. Չխենկելի, 1958, № 10, 87—91:*
- Քոչար Հրաչյա, *Որդու վերադարձը, Հրաչյա (Արիլ) Գալթյան, 1953, № 8, 45—48:*
- Քոչար Հրաչյա, *Եղբայրների արյունը, Հր. Գալթյան, 1953, № 8, 48—52:*

բ) Բրախմ-Մենապատկան և այլ հոդվածներ

- Աղաբարյան Սուրեն, Սովետահայ գրականությունը Լուսառեղակյան շրջանում, 1953, № 8, 149—158:*
- Ա. Ա., Գեորգ Գեորգիանի երկերի ժողովածուն, 1939, № 1, 189—190:*
- Ավչյան Սուրեն, Ավետիք Խաչակյան (ծննդյան 70-ամյակի առթիվ), 1945, № 9, 143—149:*
- Ավչյան Սուրեն, Հայ գրականությունը Հայրենական պատերազմի տարիներին, 1944, № 1—2, 223—226:*
- Ավչյան Սուրեն, Հայ-վրացական գրական կապեր, 1953, № 8, 159—161:*
- Արսենիշվիլի Ալ., Ալեքսանդր Շիրվանդադե, 1935, № 7—8, 310—313:*
- Բեգլարով Իվան, Հայ ժողովրդի մեծ դրամատուրգը (Գ. Սունդուկյանի մահվան 25-ամյակի առթիվ), 1937, № 6—7, 186—188:*
- Բեյ-Մամիկոնյան Գ., Վրացական ալբոմների ծագման հարցի շուրջ, 1956, № 9, 169—175:*
- Բեյ-Մամիկոնյան Գ., Վրաց մամուլիկները Եղիստոսի անկախության վերականգնման համար պայքարում, 1957, № 9, 125—140:*
- Գվերդիթիլ Գուրամ, Սահակ Մանվելյանի պատմվածքների ժողովածուն, 1960, № 1, 180—183:*
- Գրաշի Աշոտ, Ազատության երդիչը (Իլյա Օւովճավաձեի մահվան 50-ամյակի առթիվ), 1957, № 10, 35:*
- Գրաշի Աշոտ, Գեղեցկության քաղաքը (Բրիլիսիի հիմնադրման 1500-ամյակի առթիվ), 1958, № 10, 91—92:*
- Գուրիաշվիլի Լադո, Նկարիչ Գեորգ Գրիգորյանը (Ջոտտո), 1960, № 10, 179—182:*
- Գալթյան Հրաչյա (Արիլ), Ալեքսանդր Շիրվանդադե, 1958, № 11, 129—131:*
- Գեմիսյան Գեորգենիկ, Վրաց մեծ բանաստեղծը (Գալթի Գուրամիշվիլու ծննդյան 150-ամյակի առթիվ), 1955, № 9, 43:*
- Չարյան Նաիրի, Հայ-վրացական եղբայրության մշակը (Իլյա Ճավճավաձեի մահվան 50-ամյակի առթիվ), 1957, № 10, 33:*
- Հորյան Ստեփան, Մեծ Իլյան (Իլյա Օւովճավաձեի մահվան 50-ամյակի առթիվ), 1957, № 10, 34:*

- Ջորջան Ստեփան, Մեծ հայրենասիրը (Դավիթ Գուրամիշվիլու ծննդյան 150-ամյակի առթիվ), 1955, № 9, 44—45:
- Հուրտրիշվիլի Իլյա, Գաբրիել Սունդուկյանցը որպես մարդ, 1937, № 6—7, 189—195:
- Մեղաձեւ, Հայ և վրաց ժողովուրդների բարեկամության երգիչը (Հովհ. Թումանյանի մահվան 30-ամյակի առթիվ), 1953, № 4, 56—64:
- Իսսեր Գրիշաշվիլի, Հայ-վրացական դրական կապերի պատմությունը, 1961, № 3, 102—112:
- Խաչատրյան Արամ, Քաղաք, որ երգում է (Թրիլիսիի հիմնադրման 1500-ամյակի առթիվ), 1958, № 10, 63—67:
- Խառատյան Անահիտ, Հայ գրողների ամանախը, 1958, № 1, 177—180:
- Խոսրոս Ալեքսանդր, Ժողովուրդների բարեկամության դրոշով (Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության մասին), 1956, № 5, 119—125:
- Խուցիշվիլի Ս., Թրիլիսին հայ հին գրականության մեջ (Վաչե Նալբանդյանի զրքի մասին), 1960, № 4, 179—181:
- Կարա-Դարվիշ, Գեղարվեստական կյանքը Հայաստանում, 1929, № 2—3, 252—255:
- Կարա-Դարվիշ, Հայաստանի պոեզիան վերջին շրջա տարում, 1925, № 2, 141—144:
- Հայրապետյան Աշոտ, Մերուն Թորգոմյան (Ծննդյան 60-ամյակի առթիվ), 1957, № 6, 141—144:
- Մերուկե Գ., Հակոբ Հակոբյան (մահվան առթիվ), 1937, № 11, 220—224:
- Մելիքսեթ-Քեկեկոն, Վահան Տերյան (բիրիդգրաֆիական տեղեկություններ մահվան 10-ամյակի և ծննդյան 45-ամյակի առթիվ), 1930, № 1, 216—221:
- Մելիքսեթ-Քեկեկոն, Ալ. Շիրվանզադեի «Փառս» վեպը վրացերեն, 1953, № 4, 145—146:
- Մելիքսեթ-Քեկեկոն, Հովնաթան, 1933, № 5, 181—185:
- Մինդորաշվիլի Ս., Մերուն Թորգոմյանի ընտիր պատմվածքների ժողովածուն, 1953, № 8, 165—166:
- Մկիթիսվիլի, Հովհ. Թումանյանի «Բակարեղի առումը» վրացերեն, 1939, № 2, 190—191:
- Նատրոշվիլի Գիորգի, Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության երգիչը (Սալաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի առթիվ), 1963, № 10, 106—120:
- Վեյրանյան Բենիկ, Հայ մեծ դեմոկրատ-լուսավորիչը, 1955, № 10, 152—156:
- Սարյան Մարտիրոս, Թրիլիսցի բարեկամներին (Թրիլիսիի հիմնադրման 1500-ամյակի առթիվ), 1958, № 10, 86—87:
- Մուլալանուրի Արշիլ, Ավետիք Իսահակյան, 1957, № 12:
- Վաշաղմաձե Շոթա, Հայ գրողների ժողովածուն, 1955, № 7:
- Վարդանյան Սենեքերիմ, Անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների եղբայրական ընտանիքում, 1959, № 11, 132—136:
- Կանկավա Գուրամ, Ավետիք Իսահակյանը և վրաց գրականությունը, 1961, № 9, 131—138: